ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Դ. ՅԵ. ՍՈՒԼԻՄՈՎ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆ Է

342(47)
Ս-92

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ • 1937

Դ. ՅԵ. ՍՈՒԼԻՄՈՎ
ՌՍՖԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀ

05 FEB 2007
342(47)
Ս-92
01 MAR 2010

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵ

Ճառ, արտասանած խորհուրդների
Համամիութենական VIII Արտակարգ
համագումարում 1936 թ. նոյեմբերի 26-ին

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1937 • ԵՐԵՎԱՆ

34891

06 AUG 2013

57045.66

Д. Е. СУЛИМОВ

СТАЛИНСКАЯ КОНСТИТУЦИЯ—ИТОГ ИСТОРИЧЕСКИХ ПОБЕД СССР

Армпартиздат, Ереван, 1937

Ընկերնե՛ր, յերեկ Համազումարը լսեց ընկեր Ստալինի ցայտուն, եր բացառիկ պարզությամբ ու համոզարարությամբ փայլուն զեկուցումը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստալինյան Սահմանադրության նախագծի մասին։

Այդ զեկուցումը խոսում եր հերոսական այն ուղու մասին, վոր Խորհրդային Միությունն անցել է այս տարիների ընթացքում, վկայում եր հսկայական սոցիալական, կուլտուրական ու տնտեսական այն փոփոխությունների մասին, վորոնք տեղի յեն ունեցել Խորհուրդների յերկրում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում, վկայում եր նոր մարդկանց—բանվորների, կոլտնտեսականների, նոր խորհրդային ինտելիգենցիայի մասին, վորոնք իրենց համառ աշխատանքով, բացառիկ հատատակամությամբ իսկապես պատմական հաջողություններ ձեռք բերին, վորոնք հնարավոր դարձրին մեր նոր խորհրդային ստալինյան Սահմանադրությունը։

ՌՍՖԽՀ-Ի ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր՝ Ռուսաստանի Ֆեդերացիայի ժողովուրդները բոլոր յեղբայրական հանրապետությունների հետ

միասին համակված են հսկայական ուրախության զգացումով, համակված են հպարտության զգացումով այն բացառիկ հաջողություններին առթիվ, որ հալեբժացնում է նոր ստալինյան Սահմանադրությունը, այդ հաջողությունները սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերում պսակող Սահմանադրությունը:

Հարկ չկա խոսելու ռուս ժողովրդի հսկայական դերի մասին այդ հաջողություններում, Ռուսաստանի բազմազգ Ֆեդերացիայի դերի ու նշանակության մասին Խորհրդային Միության սիստեմում: ՌՍՖՍՀ-ի այդ նշանակությունը չափվում է վո՛չ թե նրա հսկայական տարածություններով (ինչպես դուք գիտեք, մեր Ֆեդերացիան տարածվում է Բալթիկ ծովից մինչև Խաղաղ օվկիանոս և Սառուցյալ օվկիանոսից մինչև Սև ծով) և վոչ էլ նույնիսկ ՌՍՖՍՀ-ի բնակչության հսկայական թվով, վոր կազմում է Խորհրդային Միության ավելի քան $^2/_3$-ը, այլ այն բացառիկ դերով, վոր խաղացել է ռուսական բանվոր դասակարգն ինքնակալության տապալման գործում, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների ազատագրման և տնտեսական, կուլտուրական ու քաղաքական զարգացման գործում, պրոլետարական հեղափոխության հաղթական առաջընթաց շարժման զարգացման գործում, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների անխորտակելի հզորագույն Միությունն ստեղծելու և ամրապնդելու գործում: Ցեվ դուր չէ ընկեր Ստալինն ասել, վոր ռուսաց լեզուն—այդ պրոլետարական հեղափոխության լեզուն է: Խորհրդային

Միության ուժն ու մեծությունը ժողովուրդների մեծ բարեկամության մեջ է: Ժողովուրդների այդ բարեկամության մեջ ռուս ժողովուրդն առաջնակարգ դեր է խաղացել ու խաղում է: (Ծափահարություններ, ձայներ. «Ճիշտ է»):

«Ցեվ ժողովուրդների այդ մեծ յեղբայրության մեջ առաջինը հավասարների շարքում ռուս ժողովուրդն է, ռուս բանվորները, ռուս աշխատավորները, վորոնց դերն ամբողջ պրոլետարական Մեծ հեղափոխության մեջ առաջին հաղթանակներից սկսած և՝ մինչև նրա զարգացման այժմյան փայլուն ժամանակաշրջանը, բացառիկ կերպով մեծ է»: (Ծափահարություններ): Այդպես եր գրում 1936 թ. փետրվարի 1-ին «Պրավդա»-ն—մեր պանծալի կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի որգանը:

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունն ինքնակալությունից ժառանգություն ստացավ քայքայված, տեխնիկայի բացառիկ ցածր մակարդակով մի արդյունաբերություն, պրիմիտիվ, ծայր աստիճան քայքայման հասցրած գյուղացիական տնտեսություն, բնակչության ճնշող մեծամասնության անգրագիտություն, անկուլտուրականություն, անբարեկարգ, անկուլտուրական քաղաքներ, վորոնք չնչին մեծություն եյին կազմում մեր յերկրի բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ:

Այն, ինչ վոր ասել ընկեր Լենինը 1918 թ. մեր տնտեսության հասարակական-տնտեսական հինգ կացու-

թաձևերի մասին*, այդ նախ և առաջ ՌՍՖՍՀ-ի տնտեսական վիճակին ևր վերաբերում։ ՌՍՖՍՀ-ում այն ժամանակ հետևողականորեն սոցիալիստական տիպի ձեռնարկությունների կողքին մի չարք շրջաններում, ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ մտնող մի չարք հետամնաց ժողովուրդների մոտ գոյություն ունեին նահապետական տնտեսական հարաբերություններ։

Ցես ձեզ չեմ պատմի այն մասին, թե ինչ ե դարձել ՌՍՖՍՀ-ն այժմ։ Այդ կնշանակեր կրկնել ամենքին հայտնի փաստերն այն մասին, որ մենք ունենք հզոր առաջավոր արդյունաբերություն, որ յերկիրն ընկեր Ստալինի նախաձեռնությամբ մեր Ֆեդերացիայի արևելքում ստեղծել ե ԽՍՀՄ-ում յերկրորդ ածխամետաղագործական բազան խոշորագույն նոր կենտրոններով, ինչպես՝ Մագնիտոգորսկը, Ստալինսկը և այլն։ Այդ կնշանակեր կրկնել մեր բոլոր քաղաքների անմատ և բարեկարգության թվերը, կրկնել, որ մեր յերկիրը դարձել ե դրագետ, որ մեր դպրոցներում սովորում են ավելի քան 19 միլիոն յերեխա՝ 1914 թվին սովորող 5,6 միլիոնի փոխարեն, որ մենք իրականացրել ենք ընդհանուր պարտադիր տարրական ուսումը և հաջողությամբ իրագործում ենք ընդհանուր յոթնամյա ուսումը։ Այդ կնշանակեր կրկնել, որ կոլտնտեսական կարգերի հաղթանակը գյուղում բացառիկ կերպով հետամնաց, աշխատանքի ցածր արտադրողականություն ունեցող անհատական մանր գյուղացիական տնտեսությունը դարձրել ե աշխարհում ամենախոշոր, առաջավոր, մեքենային տեխնիկայով զինված, սոցիալիստական կոլտնտեսային գյուղատնտեսություն։ Այդ կնշանակեր պատմել մեր յերկրի նոր մարդկանց մասին, նոր, յերջանիկ, խիզախ, առաջ ընթացող մարդու մասին, որին ծնել ու դաստիարակել ե մեր կուսակցությունը, մեր յերկիրը, որին դաստիարակել ու մեծացրել ե ամբողջ մարդկության մարդկանցից լավագույն մարդը—մեր սիրելի, հարազատ ընկեր Ստալինը։ (Ծափահարություններ)։

Ցարական ինքնակալությունը, կալվածատերերը, կապիտալիստները, ճնշելով ռուս աշխատավոր ժողովրդին, նրան իրավազուրկ, անզրաղետ վիճակում պահելով, ե՛լ ավելի մեծ ծանրությամբ, ե՛լ ավելի մեծ կամայականությամբ եյին հարձակվում նախկին ռուսական կայսրության կազմի մեջ մտնող մանր ազգությունների վրա։ Մանր ժողովուրդներն ինքնակալության որով ուրիշ կերպ չեյին ել կոչվում, բայց յեթե «այլազգիներ»։ Նրանք վո՛չ միայն զրկված եյին ամեն մի պետական իրավունքից, զրկված եյին կուլտուրական ու ազգային զարգացման իրավունքից, այլ և՝ ինքնակալությունը գիտակցաբար դարերի ընթացքում այդ ժողովուրդներին ճորտացնելու, նրանց բոլորովին ստրկացնելու քաղաքականություն ևր վարում։ Ինքնակալության հենց այդ մոլի քաղաքականությունը վոչ-ռուս ազգություններին պատկանող տասնյակ միլիոնավոր մարդկանց բառի բուն իմաստով ֆիզիկական բնաջնջման հասցրեց։ Անգրագիտություն, բացարձակ իրավազրկություն, կիսաքաղց գոյության հասնող՝ բացառիկ ցածր նյութական մակարդակ և հեռանկարներից միանգամայն զուրկ վի-

* Լենին, «Ազգ»յերեխայության և մանր-բուրժուականության մասին, հ. XXII, եջ 673, Հայկուսհրատ, 1932 թ.

ճակ,—ահա այն դրությունը, որի մեջ գտնվում էին բանվորները ու գյուղացիները—բաշկիրները, թաթարները, ղազախները, կիրգիզները, կովկասյան ժողովուրդները և նախկին ռուսական կայսրության մեջ մտնող բոլոր մյուս վոչ-ռուս ազգությունները:

Հասկանալի է, որ բացառիկ մեծ չափերի էր հասնում այն ատելությունն ու թշնամությունը, որ ինքնակալությունն առաջ էր բերում այդ ժողովուրդների մեջ դեպի ամեն ինչ, որ ռուսական էր: Անվստահության մնացուկները, ինչպես ընկեր Ստալինն ասաց յերեկ իր զեկուցման մեջ, չեյին կարող չպահպանվել յերկար տարիների ընթացքում:

Միայն խորհրդային իշխանությունը, միայն կոմունիստական կուսակցության քաղաքականությունը կարող էր արմատապես փոխել մինչև այդ ճնշված ազգությունների քաղաքական ու տնտեսական դրությունը:

Մեր հեղափոխության մեծագույն նվաճումն այն է, որ նա սկզբունքորեն այլ հիմքի վրա կառուցեց Խորհրդային Միության կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների հարաբերությունները: Բոլոր ազգությունների յեղբայրություն ու հավասարություն, ժողովուրդների բարեկամություն և փոխադարձ ոգնություն—ահա թե ի՛նչ հակադրեց մեր կուսակցությունը ինքնակալության դաղութային կողոպտիչ քաղաքականությանը:

Այժմ մեր Սահմանադրությունն ամփոփում է մեր կուսակցության այդ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը: Արդյունքն այստեղ, իսկապես

վոր փայլուն է, այն չեն կարող ժխտել նույնիսկ մեր ամենավոխերիմ թշնամիները:

Միութենական Սահմանադրության 123-րդ հոդվածն ասում է.

«ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, հանդիսանում է անխախտ օրենք»:

Մեր Սահմանադրության այս հոդվածի ամբողջ պատմական վեհ նշանակությունը վո՛չ թե այն է, որ նա այդ հռչակում է, այլ այն է, որ մենք Խորհրդային Միության մեջ այդ արդեն ձեռք ենք բերել, որ այդ արդեն յերջանիկ, բերկրալից իրականություն է դարձել: Խորհրդային Միության մեջ մտնող ժողովուրդները, ՌՍՖՍՀ-ի մեջ մտնող ժողովուրդներն իսկապես իրավահավասար են և սոցիալիզմ կառուցող իսկական միասնական աշխատավորական ընտանիք են կազմում: Թաթարական, Բաշկիրական, Չուվաշական, Կաբարդինո-Բալկարական և մյուս բոլոր ինքնավար հանրապետություններն ու մարզերն իրենց կուլտուրական ու տնտեսական զարգացմամբ հասել են այնպիսի մակարդակի, յերբ համարձակ կարելի է ասել, որ նրանք բացառիկ կարճ ժամանակամիջոցում տնտեսական ու կուլտուրական վերածնության հսկայական ուղի յեն անցել և հասել են հիմնական ռուսական շրջաններին ու մարզերին: Ցեվ ամենևին պատահական չէ, որ Թաթարիան, Բաշկիրիան, Կաբարդինո-Բալկարիան առաջիններից մեկն էին, որ կուսակցու-

թյան և խորհրդային կառավարության կողմից պարգևատրվեցին մեր յերկրի բարձրագույն պարգևով— Լենինի շքանշանով։ (Ծափահարություններ)։

Ահա, ընկերներ, մի քանի փաստեր մեր խորհրդային Թաթարիայի անցյալից ու ներկայից։ Հեղափոխության տարիներում Թաթարիան անճանաչելիորեն փոխվեց։ Միայն առաջին և յերկրորդ հնգամյակի տարիներում Թաթարիայի արդյունաբերության մեջ ներդրվեց ավելի քան 700 միլիոն ռուբլի։ Թաթարիայում այդ ժամանակամիջոցում տասնյակ նոր գործարաններ են կառուցվել, տասնյակ հազար բանվորներով։ Դրանց մեջ կան միութենական խոշորագույն նշանակություն ունեցող ձեռնարկություններ, ինչպես՝ սինթետիկ կաուչուկի գործարանը, վինո-ֆոտո արդյունաբերության հսկան, Կազմաչտորոյը, մորթեղենի արդյունաբերության խոշորագույն կոմբինատը և այլն։ Առաջ գոյություն ունեցող բոլոր ձեռնարկությունները զգալի չափով ընդարձակված և նոր տեխնիկայով հագեցված են։ Ընթացիկ տարում Թաթարական ԻՍԽՀ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 576 միլիոն ռուբլու յե հասնում 1928 թվի 94 միլ. ռուբլու և 1913 թվի 27 միլ. ռուբլու փոխարեն։ Թաթարիայի պետական և կոոպերատիվ արդյունաբերության արտադրանքը, միասին վերցրած, 740 միլ. ռուբլի յե կազմում։ Գյուղացիական տնտեսությունների 90 տոկոսը միավորված են կոլտնտեսությունների մեջ։ Խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները բռնում են Թաթարական ԻՍԽՀ ցանքերի ամբողջ տարածության ավելի քան 98 տոկոսը։ Թաթարիայի միայն ՄՏԿ-ներն ունեն 3,5 հազար

տրակտոր և ավելի քան 1000 կոմբայն, կոլտնտեսությունները ունեն 1140 բեռնատար մեքենա, այնինչ մինչև հեղափոխությունը նախկին Կազանի նահանգում բոլոր գյուղատնտեսական գործիքների 83 տոկոսն արորն ու կազմում։ Թաթարիայի բյուջեն, վորը 1934 թ. 110,2 միլ. ռուբլի յեր, ընթացիկ տարում հասել է 213,8 միլ. ռուբլու, այսինքն մեծացել է գրեթե յերկու անգամ։

1929 թ. ընթացքում Թաթարիայի ժողովրդական կրթության համար կատարվող հատկացումներն աճել և 7,5 միլ. ռուբլուց 1936 թվին հասել են 150 միլ. ռուբլու։ Թաթարիան կուլտուրական ձեռնարկումների վրա տեղական բյուջեյից միջին հաշվով տարեկան յուրաքանչյուր բնակչի վրա 50 ռ. 40 կ. է ծախսում, մինչդեռ մինչև հեղափոխությունը Կազանի նահանգական զեմստվոն նույն այդ նպատակների համար ընդամենը 13,5 կոպեկ եր ծախսում։ Ամբողջ բնակչության 83 տոկոսն անդրաղետ եր։ Այժմ Թաթարիայում կա 122 հիվանդանոց 5,5 հազար մահճակալով, ավելի քան 250 ամբուլատորիա և բուժկայան, 700-ից ավելի մշտական մանկամսուր 26,4 հազար տեղով, 2700 տարրական, 720 միջնակարգ և թերի միջնակարգ դպրոց, վորտեղ մինչև 550 հազար յերեխա յե սովորում։ Վոչ միայն բոլոր յերեխաները լիովին ընդգրկված են տարրական դպրոցներում, այլև իրագործվում է ընդհանուր յոթնամյա ուսումը։ Թաթարական ԻՍԽՀ-ում 12 բարձրագույն ուսումնական հաստատություն, 35 տեխնիկում և զգալի թվով գիտահետազոտական հիմնարկներ կան։

Թաթարիան քաղաքություն չի կազմում մյուս

ինքնավար հանրապետությունների շարքում, որոնք այս տարիներում քիչ առաջադիմություն չեն արել բոլոր տեսակետներից։ Ցեղ եկ չեմ խոսում Ղազախստանի և Կիրգիզիայի հանրապետությունների մասին, որոնք, համաձայն ստալինյան Սահմանադրության, յեղբայրական դաշնակից հանրապետությունների ընտանիքի մեջ են մտնում։ Վոչ այնքան հետաքրքիր անցյալում Կիրգիզիայի և Ղազախստանի ժողովուրդներն իրավազուրկ ու անպրպետ եյին և նրանց տնտեսությունը բացառիկ ցածր մակարդակ ուներ։ Այժմ նրանք բացառիկ հաջողություններ են ձեռք բերել։ Ընկ. Խաչեվը հենց նոր պատմեց, թե ինչպիսի հսկայական ճանապարհ է անցել Ղազախստանի ժողովուրդն այս տարիների ընթացքում։ Այս յերկու յերկիրն ել, հատկապես Ղազախստանը, արդեն ունեն խոշորագույն արդյունաբերություն, ամող ու տարեցտարի ամրապնդվող գյուղատնտեսություն և արագ զարգացող կուլտուրա։

Ազգային հանրապետությունների և մարզերի ամբողջ նրանց այդ անտրինակ հաջողությունները Լենինի—Ստալինի կուսակցության ազգային քաղաքականության իսկական հաղթանակն են հանդիսանում։

Ռուս ժողովուրդը, ՌՍՖՍՀ-ի բոլոր ժողովուրդները մեծագույն գոհունակության և հպարտության զգացումով են դիմավորում նոր դաշնակից հանրապետությունների կազմակերպումը և Ղազախստանի ու Կիրգիզիայի ժողովուրդներին հետագա ել ավելի մեծ հաջողություններ են ցանկանում սոցիալիստական շինարարության բոլոր ընդավառներում։ (Ծափահարություններ)։

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆ Ե

Մոսկվեական Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումը առաջ բերեց մեր մեծ յերկրի աշխատավորության բոլոր խավերի քաղաքական ակտիվության հսկա վերելք և վերածվեց մի ամենալայն ցույցի, որը դրսևորեց ամբողջ խորհրդային ժողովրդի կամքի միասնությունը, ժողովրդական մասսաների նվիրվածությունը սոցիալիզմի գործին, կոմունիստական կուսակցությանը, խորհրդային իշխանությանը, դրսևորեց անսահման սերը դեպի նա, ով մարմնավորում է առաջավոր մարդկության բոլոր լավագույն ձգտումները, ով կարողացավ ժողովուրդներին համախմբել, կազմակերպել այդ տարիներում Խորհուրդների յերկրի ձեռք բերած պատմական հաղթանակների համար, անսահման սերը դեպի Սահմանադրության ներշնչողն ու ստեղծողը—դեպի մեր հարազատ, բոլորից սիրված ընկեր Ստալինը։ (Ծափահարություններ)։

Այժմ դեռ լրիվ ավյալներ չունենք մեր ամբողջ յերկրի մասին։ Սակայն մի բան կասկածից վեր է,—բոլոր մարզերում, յերկիրներում, բոլոր հանրապետություններում մենք ունեցանք ամբողջ ժողովրդի այնպիսի լայն մասնակցություն, փոր, իսկապես, այդպիսի մեծ, ակտիվ մասնակցություն յերկրի հիմնական օրենքի քննարկմանը դեռ աշխարհը չի տեսել։ Ընկ. Պոլբիցինն արդեն բերեց բացառիկ ցայտուն ավյալներ Կույբիշեվի յերկրի վերաբերմամբ։ Նա ասաց, որ

յերկրում կայացել է Սահմանադրությունը քննարկող 21·000 ժողով, վորոնց մասնակցել են 2 միլիոնից ավելի ընտրողներ: Այդ ամբողջ յերկրում բնակչությունը Սահմանադրության որինագծին վերաբերող 6000-ից ավելի առաջարկ ու լրացում է մացրել:

Ահա տվյալներ Արևմտյան մարզի վերաբերմամբ: Այս մարզում Սահմանադրությունը քննարկվել է խորհուրդների 3138 պլենումներում, խորհուրդների սեկցիաների 3149 նիստերում: Այնտեղ կայացել է բանվորների, կոլտնտեսականների ու բոլոր աշխատավորների 22816 ժողով: Աշխատավորների կողմից մացված է Սահմանադրության որինագծի 14000 ուղղում ու լրացում:

Խորհրդային Սահմանադրության որինագծին վերաբերող՝ աշխատավորների այդ հարյուր հազարավոր, ավելի ճիշտ ասած, միլիոնավոր առաջարկներն ու ուղղումները տոգորված են այն հոգսով, վոր, առաջին՝ դասակարգային թշնամիները չկարողանան ստալինյան Սահմանադրությամբ ապահովվող ամենալայն ազատությունն ոգտագործել ի վնաս մեր սոցիալիստական հայրենիքի, այն հոգսով, վոր և՛ ավելի վորոշակի կերպով ամրապնդվի թե կյանքում և թե՛ Սահմանադրության մեջ ԽՍՀՄ մեջ մնող բոլոր ժողովուրդների հավասարությունը, ապահովվի բոլոր ազգերի կուլտուրական ու տնտեսական զարգացման ամենալայն հնարավորությունը, այն հոգսով, վոր և՛ ավելի ամրակուռ և անմատչելի դարձվի խորհրդային ժողովուրդների միասնական միաձույլ այն ընտանիքը, վոր կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Չկա մի քաղաք, չկա մի շրջան, մի գյուղ, չկա մի այնպիսի անկյուն մեր Խորհրդային յերկրում, վորտեղ խորհրդային Սահմանադրության նախագծի վերաբերմամբ մացված չլինեն լրացումներ և ուղղումներ, վորոնց նպատակն է ամրապնդել մեր յերկրի պաշտպանունակությունը, մեր Խորհրդային յերկիրը դարձնել անմատչելի արտաքին թշնամիների և ներքին թշնամիների համար:

Մեր յերկրի ժողովուրդները նոր Սահմանադրությունն ստալինյան Սահմանադրություն անվանեցին: Այդ ճիշտ է վո՛չ միայն այն պատճառով, վոր նա մշակված է ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ, վոր նա հասարակ, ամենապարզ ստալինյան լեզվով է գրված: Այդ ճիշտ է, վորովհետև Ստալինի ղեկավարությամբ, նրա առաջնորդությամբ մեր յերկիրն ստեղծեց այն պայմանները, վորոնք հնարավոր դարձրին մեր նոր Սահմանադրությունը: (Ծափահարություններ):

Մեր Խորհրդային յերկրի ժողովուրդները կայտառ են, կենսուրախ ու յերջանիկ: Նրանք մի առանձին վստահությամբ են նայում իրենց վաղվա որվան: Նրանց դլխին կախված չե մարդկության ամենասարսափելի պատուհասը—գործազրկությունը, նրանց դլխին կախված չե հոգից զրկվելու վտանգը, տնտեսությունը պարտքերի դիմաց աճուրդով վաճառելու փաստի առաջ կանգնելու վտանգը, ինչպես այդ կապիտալիստական յերկիրների գյուղացիների հետ է պատահում:

Այդ պայմաններում կապիտալիստական յերկիրների խոսակցություններն այսպես կոչված դեմոկրատա-

կան ազատություններին մասին մի ծաղր են աշխատավորների վերաբերմամբ։

«Իսկական ազատություն,— ասում է ընկեր Ստալինը,—կա միայն այնտեղ, որտեղ վոչնչացված է շահագործումը, որտեղ չկա վորոշ մարդկանց ճնշումը մյուսների կողմից, որտեղ չկա գործազրկություն և աղքատություն, որտեղ մարդ չի դողում, թե վաղը կարող է կորցնել իր աշխատանքը, բնակարանը, հացը։ Միմիայն այդպիսի հասարակության մեջ հնարավոր է իսկական և վոչ թե թղթե անձնական ու ամեն տեսակ ազատությունը»*։

Այդպիսի հասարակություն գոյություն ունի այժմ ԽՍՀՄ-ում, որտեղ, առաջին անգամ պատմության մեջ, սոցիալիստական իրավակարգ է հաստատվել, որտեղ չկա մարդու շահագործում մարդու կողմից, որտեղ յուրաքանչյուրը վստահ է վաղվա որվա համար, որտեղ բոլորի համար ապահովվում է աշխատանքը, որտեղ բոլոր սոցիալական պայմաններն ստեղծված են իսկապես ազատ ու ստեղծագործ աշխատանքի համար։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, մեծ Ստալինի ղեկավարությամբ աշխատավորության նվաճած այդ պայմանները կդրանցվեն Խորհրդային պետության նոր ստալինյան Սահմանադրության մեջ որպես անխախտ օրենք։

Ընկեր Ստալինը հազար անգամ իրավացի է, երբ

* Ընկեր Ստալինի զրույցն ամերիկյան «Սկրիպպս-Հոուարդ Նյուսպեյփերզի» լրագրային միավորման նախագահ պարոն Ռոյ Հուարդի հետ, էջ 28, Հայկուսհրատ, 1936 թ.։

ասում է.—«Մեր հեղափոխությունը միակն է, որը վո՛չ միայն փչրեց կապիտալիզմի շղթաները և ազատություն տվեց ժողովրդին, այլև կարողացավ նաև նյութական պայմաններ տալ ժողովրդին ունևոր կյանքի համար։ Այս է մեր հեղափոխության ուժն ու անպարտելիությունը»*։

Իսկապես, ուրիշ վո՛ր սահմանադրության մեջ, ուրիշ վո՛ր պետության մեջ կարող են ապահովվել նյութական ու կուլտուրական այն բարիքները, որոնց մասին խոսվում է ստալինյան Սահմանադրության X գլխում։

Հոդված 118. «ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, ապահովված աշխատանք ստանալու իրավունք...»։

Հոդված 119. «ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք»։

Հոդված 120. «ԽՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահովության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում»։

Հոդված 121. «ԽՍՀՄ-ի քաղաքացիները ունեն կրթության իրավունք։

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ, ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնու-

* Ստալին, Ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությանն արտասանած ճառը, էջ 16, Հայկուսհրատ, 1935 թ.։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

թյանը տրվող պետական թոշակների սիստեմով, դրպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով...»:

Հոդված 122. «Կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում»:

Կապիտալիստները, մեր Սահմանադրությունը իրենց արշինով չափելով, այսպես են դատում.—սահմանադրության մեջ, իբր թե, կարելի յե շատ լավ բաներ գրել, կապիտալիստական մի քանի յերկիրների սահմանադրության մեջ էլ վատ բաներ չեն գրված: Բայց ամբողջ բանն էլ հենց այն է, վոր մեր ստալինյան Սահմանադրությունը գրի յե առնում արդեն ձեռք բերվածը: Խորհրդային Միության բոլոր աշխատավորների հպարտությունն ու ուրախությունը վոչ այն բանից է բղխում, վոր այդ բարիքները գրի յեն առնված Սահմանադրության մեջ, այլ այն բանից, վոր բոլոր այդ նվաճումները իրական արդյունքն են պատմական այն մեծ հաղթանակների, վոր տարել է մեր յերկիրը Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած տարիներում:

Ստալինյան Սահմանադրության նշանակությունը դուրս է գալիս մեր ներքին կյանքի շրջանակներից, մեր յերկրի սահմաններից: Այս փաստաթղթի համաշխարհային նշանակությունն անսահման մեծ է:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը հիմնվեց վորպես միութենական հանրապետությունների մի կամավոր միավորություն: Ընկեր Ստալինը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության խորհուրդների առաջին համագումարում, 1922 թվի դեկտեմբերի 30-ին, հիմնավորելով խորհրդային հանրապետությունների միավորման անհրաժեշտությունը, ասել է.

«...Փլուզումը ջախջախելու և վերացնելու համար անհրաժեշտ է դումարել բոլոր խորհրդային հանրապետությունների ուժերը. անհրաժեշտ է հանրապետությունների ունեցած բոլոր ֆինանսական ու տնտեսական հնարավորությունները տրամադրել մեր արդյունաբերության հիմնական ճյուղերի վերականգնման գործին: Այստեղմից՝ խորհրդային հանրապետությունները իրրև մի միութենական պետություն միավորելու անհրաժեշտությունը: Այսորվա որը հանդիսանում է մեր հանրապետությունները վորպես մի պետություն միավորելու որ, վորպեսզի դումարենք մեր ուժերը՝ մեր տնտեսության վերականգնման գործի համար»*:

Անցած 14 տարիների ընթացքում մենք լրիվ չվերացրինք այն քայքայումը, վորի մասին խոսք կար այն ժամանակ: Մենք հզոր ինդուստրիալ պետություն ստեղծեցինք: Այդ տարիների ընթացքում մենք մի այնպիսի տարածություն անցանք, վորը շատ տասնամյակների ընթացքում չի անցել և վո՛չ մի ամենաառաջավոր կապիտալիստական պետություն: Սոցիալիզմը մեր յերկրում հաղթանակել է վերջնականապես և անդառնալիորեն: Վոչնչացված է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: Մեր հասարակարգի հիմքը հանրային սոցիալիստական սեփականու-

* Ստալին, «Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», էջ 134, Հայկուսհրատ, 1935 թ.:

թյունն է: Շահագործող դասակարգերը վոչնչացված են: Վերացված է կուլակությունը վորպես դասակարգ: Մեր յերկրում ջնջվում են սահմանները դասակարգերի միջև: «Մեր հասարակությունը բաղկացած է բացառապես քաղաքի ու գյուղի ազատ աշխատավորներից—բանվորներից, գյուղացիներից, ինտելիգենցիայից»*:

ԱՃՈՒՄ ՅԵՎ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր միութենական հանրապետություն, մտնելով ԽՍՀՄ-ի կազմի մեջ, միաժամանակ սուվերեն (գերիշխան) պետություն է: Յուրաքանչյուր միութենական հանրապետության համար լիովին ապահովվում են սուվերեն (գերիշխան) պետության բոլոր իրավունքները, կիսպ մինչև Միության կազմից դուրս գալու իրավունքը (Սահմանադրության նախագծի 15, 16 և 17 հոդվածները):

Միութենական հանրապետությունների գերիշխանությունը սահմանափակվում է միայն Սահմանադրության 14-րդ հոդվածում մատնանշված շրջանակներում. այդ հոդվածում թվարկվում են այն հարցերը, վորոնց վերաբերմամբ բացառապես իրավասու է Միությունը՝ ի դեմս նրա իշխանության բարձրագույն որգանների և պետական կառավարչության որգանների: Դրանք նախ և առաջ Խորհրդային Միության արտաքին քաղաքականության և նրա արտաքին անվտանգությունը ապահովելու հարցերն են: Սրան են վերաբերում Միության ներկայացուցչությունը միջազգային հարաբերություններում, ուրիշ պետությունների հետ պայմանագրեր կնքելն ու դրանց վավերացումը, այնուհետև—պատերազմի և հաշտության հարցերը, պաշտպանության կազմակերպումը և բոլոր զինված ուժերի ղեկավարումը, արտաքին առևտուրը պետական մենաշնորհի հիմունքով:

Այսպիսով, միջազգային իմպերիալիզմի հանդեպ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը հանդես է գալիս մի միասնական հզոր ռազմական, դիվանագիտական և տնտեսական ֆրոնտով: Այդ հարցերը միութենական հանրապետություններն ամբողջապես ու լիովին վստահել են ԽՍՀ Միությանը:

Սակայն մեր Խորհրդային Միությունը լոկ խորհրդային հանրապետությունների քաղաքական միավորումն չէ: Նա միևնույն ժամանակ մի ամբողջական սոցիալիստական ժողովրդական տնտեսություն է, վորը կառուցվում է ժողովրդատնտեսական միասնական պլանի հիման վրա: Այդ պատճառով էլ տնտեսական բնույթի մի ամբողջ շարք խնդիրներ, սոցիալիստական տնտեսության պլանային կարգավորման ու կառավարման մի շարք ֆունկցիաներ նույնպես վերաբերում են ԽՍՀ Միության իրավասությանը: Այդ ֆունկցիաները վո՞չ միայն Միության ժողովրդատնտեսական պլանը սահմանելն ու պետական բյուջեն հաստատելն են, այլև ժողովրդական տնտեսության ընդհանուր-միութենական նշանակություն ունեցող տնտեսական ձեռնարկություն-

* Ընկեր Ստալինի զրույցը պ. Ռեյ Հոուարդի հետ, էջ 30, Հայկուսհրատ, 1936 թ.:

ներն ու մի ամբողջ շարք ճյուղերն անմիջականորեն կառավարելը։

Գործող Սահմանադրության համեմատությամբ այդ կետերը չեն մտցնում վոչ մի եական և սկզբունքորեն նոր այնպիսի մոմենտներ, վորոնք փոփոխեին կամ մանավանդ նվազեցնեին, սահմանափակեին միութենական հանրապետությունների իրավունքները հոդուտ միութենական որգանների։ Ընդհակառակը, նոր Սահմանադրությունը մեծացնում է միութենական հանրապետությունների անտեսական իրավունքներն ու նյութական բազան։ ՌՍՖՍՀ-ում, որինակ, ստեղծվել են չորս նոր ժողկոմատներ—Թեթև արդյունաբերության ժողկոմատ, Սննդարդժողկոմատ, Անտառժողկոմատ և Խորհրդտեսությունների ժողկոմատ։ Միութենական կառավարության վորոշմամբ այս ժողկոմատների իրավասությանն ու կառավարմանն է հանձնված միութենական նշանակություն ունեցող ձեռնարկությունների մի զգալի մասը։ Համամիութենական ժողկոմատի իրավասությունից ՌՍՖՍՀ-ի Թեթև արդ. ժողկոմատին են հանձնված ավելի քան հարյուր խոշոր ձեռնարկություններ, վորոնց արդյունաբերական արտադրանքը կազմում է ավելի քան 1300 միլիոն ռուբլի (1926–27 թ. անփոփոխ գներով)։ ՌՍՖՍՀ-ի Սննդարդժողկոմատի իրավասությանն են հանձնված 1500-ից ավելի ձեռնարկություններ, վորոնց արտադրանքը 1·327 միլ. ռուբ. յե կազմում։ ՌՍՖՍՀ-ի Խորհրդտեսությունների ժողկոմատի իրավասությանն են հանձնվում 860 խորհրդտեսություններ այն 1200 խորհրդտեսություններից, վոր Համամիութենական ժողկոմատն ունի ՌՍՖՍՀ-ի տերիտորիայում։

Այսպիսով, նյութական բազան նոր Սահմանադրության հետևանքով ՌՍՖՍՀ-ում և մյուս բոլոր միութենական հանրապետություններում զգալիորեն մեծանում է։

Այս ամենալավ պատասխանն է արտասահմանյան պոլիտիկաններին, վորոնք քննադատում են մեր Սահմանադրությունն այն տեսանկյունով, թե իբր նրա մեջ նվազեցվում են միութենական հանրապետությունների իրավունքները, և նախատեսվում է նվազեցնել նրանց նյութական բազան։

Մենք կողմնակից ենք հզոր Խորհրդային Միության։ Մենք կողմնակից ենք, վոր Խորհրդային Միությունը լինի լայնորեն միութենական պետություն թե դրսում և թե ներսում։ Մեր Ֆեդերացիայի բոլոր ժողովուրդները, անկախ ազգությունից, շատ լավ են հիշում և յերբեք չեն մոռանա, վոր բացի ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, մեր սոցիալիստական հայրենիքի աշխատավորները նաև որինական իրավունք ունեն ամրացնելու իրենց սոցիալիստական պետությունը, աշխատավորներն իրավունք ունեն ստեղծելու մի այնպիսի հզոր սոցիալիստական պետություն, վորին զարնվելով ջարդուփշուր լինեն բոլոր թշնամիները, վորտեղից և ինչ քանակությամբել նրանք գալու լինեն։ (Ծափահարություններ)։

ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Այն տարիների ընթացքում, վորոնք անցել են առաջին խորհրդային Սահմանադրությունն ընդունելու մոմենտից մինչև այժմ, յերբ մենք նոր Սահմանա-

դրությունն ենք ընդունում, բանվոր դասակարգն աճել է մեր յերկրում ավելի քան յերեք անգամ։

Նա անչափ աճել է նաև կուլտուրական և քաղաքական տեսակետից։ Աճել է նրա արտադրական վարակավորումը։ Մեր թշնամիները չատ եյին կռավում այն մասին, թե մենք չենք կարողանալու տիրապետել նոր տեխնիկային, չենք կարողանալու յուրացնել մեր կառուցած նորագույն գործարանները։ Թշնամիների հույսերն այստեղ էլ խորտակվեցին։ Մեր յերկրի բանվոր դասակարգը հաջողությամբ հաղթահարում է նոր տեխնիկան յուրացնելու խնդիրը, իսկ զարգացող ստախանովյան շարժումը այն մասին է վկայում, վոր չկան այնպիսի բերդեր, վոր չկարողանա գրավել մեր յերկրի բանվոր դասակարգը, վոր չկարողանան գրավել կուսակցական ու անկուսակցական բոլշևիկները։

Ցեվ ինչպե՞ս չգրավենք մենք այդ բերդերը։

Դիտեցե՛ք մեր գործարանների վիճակի պատկերը, կադրերի աճումը, նրանց կուլտուր-կենցաղային սպասարկումը։ Ցես կբերեմ մի քանի տվյալներ Մոսկվայի Ստալինի անվան ավտոգործարանի մասին։ Այդ գործարանում 38 հազարից ավելի մարդ է աշխատում։ Այդ գործարանի վարժական-արտադրական կոմբինատում առանց արտադրությունից կտրվելու սովորում է ավելի քան 18 հազար մարդ, այսինքն բանվորների ու ծառայողների ամբողջ կազմի 49 տոկոսը։ Դրանցից տեխնիկումում սովորում են 510 հոգի, բանֆակում—425, ֆարգործուսի դպրոցում—1000 հոգի, տեխմինիմում են անցնում 6 հազար հոգի, սոցիալիստական աշխատանքի վարպետների դասընթացներում սովորում է 1700 հոգի, ստախանովյան դասընթացներում

—3500, ինժեներ-տեխնիկական աշխատողների վորակի բարձրացման դասընթացներում—564, նոր բանվորների պատրաստման դասընթացներում—2 հազար հոգի, ոտար լեզուների ինստիտուտում—600, մեծահասակների միջնակարգ կրթության յերկու դպրոցում—1730 հոգի։

Ավելացրե՛ք սրան այն փաստը, վոր բանվորների ու ծառայողների բոլոր յերեխաներն ընդունված են դպրոց, վոր նրանց առաջ լայն կերպով բաց են բարձրագույն ուսումնական հաստատությունների ու տեխնիկումների դռները, և դուք կտեսնեք, թե ինչպես է կենդանի կյանքում իրագործվում Սահմանադրության մեջ դրանցված կրթության իրավունքը։

Այդ նույն գործարանում կա 193 քաղխմբակ, վորոնք ընդգրկում են ավելի քան 2,5 հազար մարդ (դրանցից կուսակցական խմբակներ—82, կոմյերիտմիությենական խմբակներ—84, արհմիությենական խմբակներ—27)։ Գրադարանն ունի 70 հազար գիրք և մոտ 10 հազար մշտական ընթերցող։ Գործարանի բանվորներն ամսական 12 հազար որինակ կենտրոնական լրագրեր, 3,5 հազար որինակ ժուռնալներ են ստանում։ Գործարանային «Догнать и перегнать» լրագրի տիրաժը 10 հազար որինակ է։

630 հոգի գեղարվեստական ինքնագործության խմբակների անդամ են։ Խմբակների թվում են խորեոգրաֆիական կոլեկտիվը, սիմֆոնիկ նվագախումբը, ոպերային բանվորական թատրոնը, յերգեցիկ խմբակը և այլն։

Այդ գործարանում աշխատողներից 74 հոգի ավարտել են ոդաչուների դպրոցը, 61 հոգի ավարտել են

պլանային դպրոցը և 4850 հոգի վորոշիլովյան հրաձիգներ են։

1936 թվին բանվորներին հանգստյան տների և սանատորիաների 3300 ուղեգիր է տրված։

Նույնպիսի պատկեր մենք կարող ենք տեսնել Մոսկվայի «Серп и молот» գործարանում, վորն ունի գործարանի համար վորակյալ կադրեր պատրաստող իր ինստիտուտը, ունի իր տեխնիկումը, բանֆակը, գործարանային աշակերտության դպրոցը, զանազան դասընթացներ և այլն։ «Трехгорная мануфактура»-ի վերաբերմամբ յես պետք է ավելացնեմ, վոր այդ գործարանում յերկու դրադարան կա,—մասսայական, վորն ունի 13 հազար գիրք, և տեխնիկական, վորն ունի 8400 գիրք։ Տեխնիկական դրադարանին կից աշխատում է բանվոր հեղինակներից բաղկացած խմբակ։ Արդեն հրատարակված են գործարանի բանվորների գրած հետևյալ գրքերը՝—Զայցեվ՝ «Печатное дело», Խրոմով՝ «Граверное дело», Կոմիսարով՝ «Строгальное и чесальное дело», 5 հեղինակ մի բրոշյուր են գրում թեթև արդյունաբերության մեջ ստախանովյան մեթոդներ կիրառելու մասին։

Գործարանին կից կա թատրոն 1400 մարդու համար, ստեղծված է Պավլիկ Մորոզովի անվան մանկական կուլտուրայի տուն, հրատարակվում է տպագիր «Пионер трехгорки» մանկական լրագիրը, գործարանի մանկապարտեզն ընդգրկում է 450 յերեխա, կառուցվում է մանկապարտեզների 2 նոր շենք։

Իմ հիշած այս ձեռնարկություններն առանձին բացառություն չեն կազմում։ Նույնպիսի պատկեր, թերևս փոքր ինչ այլ վարիացիաներով, դուք կհանդիպեք ամեն մի գործարանում—և՛ այստեղ Մոսկվայում, և՛ Լենինգրադում, և՛ մեր արդյունաբերական ամեն մի կենտրոնում։

Իսկ միթե մեր կոլտնտեսություններն իրենց արտադրությանը զուգընթաց հսկայական կուլտուրական աշխատանք չեն կատարում։ Միթե մեր կոլտնտեսականները վորևե չափով նման են նախկին գյուղացիներին, վորոնց շահագրգռությունն իրենց գյուղի, կամ մինչև իսկ իրենց փոքր հետամնաց սեփական տնտեսության սահմաններից դենը չեր անցնում։

Ահա այս նոր կացությունը, այս նոր խորհրդային մարդկանց է արտացոլում ստալինյան Սահմանադրության նախագիծը։

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ԲՈԼՈՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ստալինյան Սահմանադրությունը նոր պայմաններ է ստեղծում առանց բացառության բոլոր խորհրդային պետական որգանների աշխատանքի համար, բոլոր տնտեսական և կուլտուրական կազմակերպությունների աշխատանքի համար, բայց Սահմանադրությունը նրանց նաև բավական բարձր պահանջներ է առաջադրում։ Այժմ մեր առջև դրված է մի խնդիր՝ ըստ հնարավորին չուտ վերակառուցել մեր բոլոր պետական որգանների աշխատանքը վերից վար և այն դարձնել ավելի լավ հիմքերի վրա դնել, քան այդ յեղել

և մինչև այժմ, այդ աշխատանքն ավելի բարձր մակարդակի հասցնել:

Քաղխորհուրդների, շրջանային գործկոմների և տեղական մյուս կազմակերպությունների պլենումների վերջին ժամանակվա աշխատանքին ծանոթանալուց այն տպավորությունն է ստացվում, որ շատ տեղական աշխատողներ, տեղական խորհրդային կազմակերպություններ բավական լավ են իրենց պատկերացնում ստալինյան Սահմանադրության քաղաքական հիմքը, բայց շատ դանդաղ են յուրացնում այն նոր կոնկրետ պարադան, որ յուրաքանչյուր խորհրդային որդանի համար ստեղծվում է Սահմանադրությունն ընդունվելու հետևանքով: Քաղխորհուրդների, շրջանային գործկոմների նախագահները և խորհրդային ապարատի մյուս բոլոր աշխատողները պետք է հիմնավորապես յուրացնեն, որ նոր Սահմանադրությունը նրանցից կպահանջի արմատապես փոխել իրենց աշխատանքի մեթոդները, նոր Սահմանադրությունը նրանցից կպահանջի շատ ավելի մեծ կուլտուրա, անսահման ավելի ուշադիր վերաբերմունք դեպի բնակչության բոլոր պահանջները, նրա բոլոր առորյա կարիքները, դեպի այն ամենը, ինչով ապրում են մեր յերկրի աշխատավորները յուրաքանչյուր գյուղում, շրջանում, յուրաքանչյուր քաղաքում: Այս կապակցությամբ յես ուզում եմ ձեզ հիշեցնել ընկեր Ստալինի այն խոսքերը, որ նա ասել է ամերիկյան մամուլի ներկայացուցիչ պ. Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցի ժամանակ.

«Ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրությունները ԽՍՀՄ-ում բնակչության ձեռքին կլինեն

մի մտրակ ընդդեմ իշխանության վատ աշխատող որդանների»:

Քաղխորհուրդների, շրջգործկոմների և գյուղխորհուրդների ներկայացուցիչներից նրանք, որոնք չեն կարողանա ժամանակին վերակառուցել իրենց աշխատանքը,—չեն կարողանա բնակչության վստահությունը նվաճել, չեն կարողանա այդ պայմաններում վերընտրվել: Պետք է հիշել, որ ընտրություններն ըստ նոր Սահմանադրության հիմնովին այլ կլինեն, քան մինչև այժմ են յեղել: Այս տարբերությունը, ինձ թվում է, տակավին ամենքը չեն յուրացրել, տակավին ամենքը բավականաչափ չեն ըմբռնել: Այս բոլորի մասին պետք է մտածել հենց այժմ: Պետք է ապահովել խորհրդային աշխատանքի իսկական բարելավումը, պետք է այն է՛լ ավելի բարձր աստիճանի հասցնել:

* * *

Ստալինյան Սահմանադրությունը ամենադեմոկրատական սահմանադրությունն է աշխարհում: Մեր յերկրի բոլոր ժողովուրդները քվեարկում են այդ Սահմանադրությունը հաստատելու ոգուին: Նա անպայման կհաստատվի մեր Համազումարի կողմից, ինչպես հաստատվել է արդեն մեր ամբողջ յերկրի ժողովուրդների կողմից՝ անթիվ-անհամար ժողովներում, պլենումներում ու համազումարներում:

Մենք հաստատ համոզված ենք, որ ստալինյան Սահմանադրության հիմքի վրա Խորհրդային Միությունն է՛լ ավելի արագ առաջ կգնա—դեպի նոր սոցիալիստական հաղթանակներ: Աշխարհում վո՛չ մի ուժ ի վիճակի չի կանգնեցնելու Խորհուրդների յերկրի այդ հաղթական յերթը: Խղճուկ, ամենաչնչին սողուն-

ների տպավորություն են թողնում անարդ մարդասպանները, յերկերեսանիները, ֆաշիստական բուրժուազիայի գործակիցները այդ բուրժուազիայի ամենակեղտոտ և ամենամութ գործերում,—տրոցկիստական-զինովյեվական այդ դահճները, վորոնք վնասարարություն են անում անկյունից, փորձում են տեռորով զրկել մեզ մեր յերկրի այն լավագույն մարդկանցից, վորոնց հեղափոխությունն է ասպարեզ հանել մեր կուսակցությունը և Խորհուրդների յերկիրը ղեկավարելու համար: Ժողովրդի պատժող ձեռքը կավլի-կսրբի այդ սրիկաներին՝ մինչև վերջին մարդը, վերջ կդնի նրանց հանցավոր, նողկալի գործունեությանը:

Այս մոմենտին, յերբ նոր Սահմանադրությունն է հաստատվում, մեր մեծ հայրենիքի բոլոր աշխատավորների սիրո ու նվիրվածության անսահման զգացմունքները դարձյալ ուղղվում են դեպի մեր մեծ, պանծալի մարտական կոմունիստական կուսակցությունը: Սիրո և նվիրվածության այդ զգացմունքներն ուղղվում են դեպի նա, ով վոգեշնչողն ու ղեկավարն է մեր տարած բոլոր հաղթանակների, դեպի մեծադույն պատմական փաստաթղթի ստեղծողը, Լենինի գործի շարունակողը—դեպի մեծ, սիրելի, հարազատ Ստալինը: (Ծափահարություններ):

Կեցցե՛ Խորհրդային Միության ժողովուրդների անխորտակելի յեղբայրական դաշինքը: (Փոքրիկալից ծափահարություններ: Դահլիճը ովացիա յե սարքում ընկ. Սուլիմովի պատվին: Լավում են «Կեցցե՛ Խորհրդային Միությունը» բացականչություններ):

ՊԵՏ ԿՍՆ ԿՊ. ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ս. ԿՊ. Ա. ՄԱՇՏՈՑԻ
ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ՌՍՖՍՀ դերն ու նշանակությունը ժողովուրդների յեղբայրական բարեկամության մեջ 5
Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի պատմական հաղթանակների հանրագումարն է 15
Աճում և ամրապնդվում են միութենական հանրապետությունները 22
Մեր յերկրի նոր մարդիկ 25
Բարձրացնենք և բարելավենք բոլոր խորհրդային որգանների աշխատանքը 29

Թարգմ. Հ. Տ.-Հովհաննիսյան
Խմբ. Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Լ. Աբովյան
Սրբագրիչ՝ Վ. Ջիդեջյան

Գլավլիտի լիազոր № Ի—4865, Հրատ. № 423
Պատվեր № 26, Տիրաժ 4500, Ինդեքս $\frac{\text{П-84}}{\text{РК}}$
Հանձնված է արտադրության 29/I 1937 թ.
Ստորագրված է տպագրության 3/II 1937 թ.
ԳԻՆԸ 50 Կ.

Հայկուսհրատի տպարան, Ցերեվան, Աբովյանի № 71

«Ազգային գրադարան»
NL0217298

166
34.891
գին 50 կ.
907

Д. Е. СУЛИМОВ

СТАЛИНСКАЯ КОНСТИТУЦИЯ — ИТОГ ИСТОРИЧЕСКИХ ПОБЕД СССР

Армпартиздат, Ереван. 1937